

ինքը պատերի վրայից չի կարդացել, այլ արտագրել է Ղրիմեցու ընդօրինակութուններին: Այդ տեսակետով ուշագրավ է Հով. Քաջբերունու դեռևս 1884 թվականին գրածը.

«Հաղթատում և Սանահնում մեզ ասացին ժամանակակից գիտակ անձինք, թե հանգուցյալ Ջալալյանցն ինքն անձամբ չէ ժողովել այդ վանքերի արձանագրութուններն, այլ ուղղակի օրինակել է Շնողեցի Հարություն եպիսկոպոս Տեր-Քարսեղյանցի ձեռագրից, որ, ինչպես ասում են, առնված է Ղրիմեցի Հովհաննես վարդապետի ձեռագրից, որը կազմել է վերջինս Եփրեմ կաթողիկոսի այստեղ եղած ժամանակ, գուցե և նորա հրամանով: Ուտի և այդպիսի սխալներն անխուսափելի կլինին, այդ սխալների մի մասի վերա 1872 թվականին մատնացույց արեց և պ. Երիցյանց (տե՛ս «Кавказская старина», էջ 81—82 ծանոթությունների մեջ)»¹:

Մենք Շնողեցի Հարություն եպիսկոպոս Տեր-Քարսեղյանցի գործին ծանոթ չենք, ուտի և այդ գործի ու Ջալալյանցի աշխատության նմանության մասին ոչինչ ասել չենք կարող, բայց մի բան կարող ենք հաստատապես պնդել, որ Ջալալյանցը Ղրիմեցուց չի արտագրել իր արձանագրութունները, այլ ինքնուրույն կերպով է պատերից ընդօրինակել: Այդ են ապացուցում այդ երկու հեղինակների վերծանության մեջ եղած բազմաթիվ տարբերությունները: Բերենք մի քանի ապացույցներ.

ա. Ղրիմեցին ունի 63, իսկ Ջալալյանցը 68 արձանագրութուն, բայց դրանց մեջ երկու ժողովածուներում ընդհանուր է միայն 50-ը: Ջալալյանցի ժողովածուի 18 արձանագրութուն Ղրիմեցին չունի, նշանակում է, այդ 18 արձանագրութունները առաջին անգամ գրի է առել Ջալալյանցն ինքնուրույն կերպով, առանց որևէ մեկից արտագրելու: Դրանք են մեր ժողովածուի 21, 32, 44, 46, 47, 48, 50, 54, 58, 60, 106, 125, 135, 169, 170, 171, 178 և 184 համարները:

բ. Ղրիմեցու ունեցած արձանագրութուններից 13-ը Ջալալյանցը չունի, եթե վերջինս արտագրած լիներ Ղրիմեցուց կամ ծանոթ լիներ նրա ժողովածուին և օգտագործեր այն, այդ դեպքում նա լրիվ կընդգրկ-

կեր Ղրիմեցու ունեցած բոլոր արձանագրութունները: Ջալալյանցը չունի Ղրիմեցու ունեցած մեր ժողովածուի հետևյալ համարները՝ 39, 40, 51, 93, 95, 146, 157, 158, 159, 180, 181, 182 և 183:

գ. Ղրիմեցու և Ջալալյանցի ժողովածուների մեջ թեև 50 արձանագրութուն ընդհանուր են, բայց նրանց վերծանության բազմաթիվ տարբերությունները ցույց են տալիս, որ մեկը մյուսի ժողովածուին ծանոթ չի եղել և միմյանցից չեն օգտվել:

Օրինակ. մեր ժողովածուի № 12 արձանագրութունը երկուսն էլ կարդացել են սկզբի տողը համեմատաբար միանման, բայց շարունակությունը՝ բավական տարբեր. այսպես՝

Ղրիմեցի

Ջալալյանց

... ես Յովանէս առաջնորդ սուրբ ուխտիս՝ շինեցի... զեկեղեցիս առաջնորդութեամբ ամիր Բրդին, և վարդապետին մեծի Գրիգորի, և Քրիստոսի Աստուծոյ և զգաւիթս ի հիմանց մելիթս ի հիմանց մեծաւ յուսով. աշխատակից և եղբարցս՝ զհայր Յովանէս գարժանին ամ օրհնութեան ունելով. զի յե աւուրս սոցա կրկին յաւուրս սոցա կրկին ազատեցան եկեղեցիքս յամենայն հարկէ. յիշեցէք ի Քրիստոս:	... ես Յովանէս առաջնորդ սուրբ ուխտիս շինեցի... զեկեղեցիս առաջնորդութեամբ ամիր Բրդին, և վարդապետին մեծի Գրիգորի, և Քրիստոսի Աստուծոյ և զգաւիթս ի հիմանց մելիթս ի հիմանց մեծաւ յուսով. աշխատակից և զեղբարս յիշեցէք. զգաւիթս ի հիմանց մեծաւ յուսով. զաշխատակից և զեղբարս յիշեցէք. զգաւիթս ի հիմանց մելիթս ի հիմանց մեծաւ յուսով. աշխատակից և զեղբարս յիշեցէք. զգաւիթս ի հիմանց մելիթս ի հիմանց մեծաւ յուսով. զաշխատակից և զեղբարս յիշեցէք.
---	---

Այստեղ պարզ երևում է, որ Ջալալյանցը բոլորովին գլուխ չի ցավացրել կարդալու արձանագրության մաշված ու դժվարընթեռնելի տեղերը, որոնք արդեն կարդացել էր Ղրիմեցին, և եթե Ջալալյանցը նրանից արտագրեր, այդ տեղերը բաց չէր թողնի: Բաց թողած մասերի պատճառով Ջալալյանցը ստիպված է եղել արձանագրության տարբեր մասերը խմբագրելով միահյուսել, իսկ Ղրիմեցին, որ նույնպես սխալներ շատ ունի, ավելի հարազատ է մնացել արձանագրութունների բնագրին և քմահաճ կերպով կրճատումներ ու միացումներ չի արել:

Բացի այդ, բառերի ուղղագրության, վերջավորության և այլ տարբերություններ

¹ «Սրբազանք», 1884, № 43, էջ 628: